

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1395-Ն
որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ
կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշման
նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

« ____ » _____ 2023 թվականի N ____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1395-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության քննչական
կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին այլ վայր
ծառայության նշանակմամբ կամ ծառայության գործուղելիս բնակելի
տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում դրամական
փոխհատուցում տալու կարգը և չափը սահմանելու մասին» N 1395-Ն
որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ
փոփոխությունները և լրացումները՝

1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն
զբաղեցնող անձին վարուբային գործողությունների ընթացքում առաջացող
ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև այլ վայր ծառայության նշանակմամբ
կամ ծառայության գործուղելիս բնակելի տարածությամբ ապահովելու
անհնարինության դեպքում դրամական փոխհատուցում տալու կարգը և չափը

սահմանելու մասին».

2) Որոշման նախաբանը «42-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «և 43-րդ հոդվածի» բառերով.

3) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող յուրաքանչյուր անձի տրամադրել ամսական 15 հազար դրամ տրանսպորտային, հաղորդակցության միջոցների, ինչպես նաև վարուժային գործողությունների ընթացքում առաջացող և պետական միջոցներից չֆինանսավորվող այլ ծախսերը փոխհատուցելու նպատակով:».

4) Որոշման հավելվածի 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ զեկուցագիրը քննարկվում է քննչական կոմիտեի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնում: Սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում որոշվում է տրամադրել դրամական փոխհատուցում, եթե դրանցում առկա չեն թերություններ: Փաստաթղթերում թերությունն հայտնաբերելու դեպքում դրամական փոխհատուցում տալու մասին որոշումն ընդունվում է այն վերացնելուց և փաստաթղթերը ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Չեկուցագրի բավարարման դեպքում քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին փոխհատուցման գումարները վճարվում են նախատեսված բյուջետային միջոցների հաշվին:»:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ն. Փաշինյան